ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021 թվականի կարիքների համար որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ԹԱԿ-ԳՀԾՁԲ-21/101 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ժ. 11[00]

13.10.2021թ.

Նիստին մասնակցում էին՝

նախագահ՝ Կարեն Պողոսյան

անդամներ՝ Սարգիս Մելիքյան, Արա Մարտիրոսյան

Քարտուղար՝ Աննա Չոբանյան

1.Տեղեկություններ հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

Կարեն Պողոսյան

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե
1	«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ	info@shincertificate.net

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

2.Տեղեկություններ հայտ պարունակող ծրարը սահմանված կարգով կազմելու և ներկայացնելու համապատասխանության մասին

Կարեն Պողոսյան

2.1 Մասնակցի կողմից ներկայացրած ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

3. Բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանության մասին

Կարեն Պողոսյան

3.1 Մասնակցի կողմից ներկայացրած ծրարում պահանջվող փաստաթղթերը առկա են, կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ հավելված 3-ի, որում առաջարկվող հիմնական աշխատակազմում որպես 2-րդ մասնագետ նշվել է ներկայացված առաջին մասնագետի անուն ազգանունը, սակայն որպես երկրորդ մասնագետ գրավոր համաձայնություն է տվել այլ անձ:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

4.Ոչ գնային պայմանների գնահատման մասին

Կարեն Պողոսյան

4.1 Մասնագիտական փորձառության չափանիշի մասով մասնակցի որակավորումը համապատասխանում է հրավերի պահանջներին: Աշխատանքային ռեսուրսներ չափանիշի մասով ներկայացված երկրորդ մասնագետը ըստ դիպլոմի ստացել է միջազգայնագետ- իրավաբանի որակավորում, սակայն հրավերով պահանջվում է ինժեների որակավորում:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

5.Հանձնաժողովը որոշեց՝

Կարեն Պողոսյան

5.1 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները, մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով պետք է ծանուցի «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ –ին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրության 3.1-րդ և 4.1-րդ կետերում նշված անհամապատասխանությունները :

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրը, օրը և ժամը հաստատելու մասին

Կարեն Պողոսյան

6.1 ԹԱԿ-ԳՀԾՁԲ-21/101 ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա 15.10.2021 թվականին, ժամը 10:00 -ին ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ -ում՝ ք. Աբովյան, Արզնու խճուղի 10 հասցեում:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 15.10.2021 թ.-ին ժամը 10:00-ին:

Նիստին մասնակցում էին՝
նախագահ՝ Կարեն Պողոսյան
անդամներ՝ Սարգիս Մելիքյան, Արա Մարտիրոսյան
Քարտուղար՝ Աննա Զոբանյան

7. Հայտում տեղ գտած անհամապատասխանությունների շտկման մասին

Կարեն Պողոսյան

7.1 Սահմանված ժամկետում «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ -ի կողմից հրավերով նախատեսված պահանջների նկատմամբ անհամապատասխանությունները շտկվել են, այն հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

8. Մասնակցի կողմից առաջարկված գնի մասին

Կարեն Պողոսյան

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակից	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով/ՀՀ դրամ/	Առաջարկած գին /ՀՀ դրամ/	
				առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Գլխավոր մասնաշենքի 3-րդ հարկի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ	«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ	381200	350000	420000

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

9.Հանձնաժողովը որոշեց՝

Կարեն Պողոսյան

9.1 Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետի **(...կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա)** բ պարբերության, հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը մասնակցին էլեկտրոնային ձևով պետք է ծանուցի գնի նվազեցման շուրջ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին: **Բանակցությունների վարման օր է նշանակվում 19.10.2021 թվականին ժամը 11:00 -ն:**

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

10.Բանակցությունների վարման մասին

Կարեն Պողոսյան

10.1 Բանակցությունների նիստը կայացել է 19.10.2021 թվականին ժամը 11:00-ին, ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ -ում՝ ք. Աբովյան, Արզնու խճուղի 10 հասցեում: Բանակցությունների արդյունքում «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ն առաջարկել է նոր գնային առաջարկ՝ 375000 ՀՀ դրամ: Առաջարկված գինը չի գերազանցում գնման հայտով սահմանված գինը:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

11.Բանակցությունների արդյունքների հինման վրա հանձնաժողովը որոշեց՝

Կարեն Պողոսյան

11.1 «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ին հայտարարել ԹԱԿ-ԳՀԾՁԲ-21/101 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից:

11.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

11.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում:

ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Կարեն Պողոսյան

Անդամներ՝ _____ Սարգիս Մելիքյան

_____ Արա Մարտիրոսյան

Քարտուղար՝ _____ Աննա Զոբանյան